

ԲՈՇՎԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ԲԺՇ. Թ. ԶԱՔԱՐԵԱՆՆԻ

Проф. Синарскій—Объ успѣхахъ медицины въ изученіи явленій психическаго міра. Крафтъ-Эбингъ—Psychiatria, т. I.—Ziegen—Leitfaden der Physiologischen Psychologie.

Ա.

Մարդկային գիտութիւններից ոչ մէկը այնքան հին և այնքան տարածւած չէ, որքան բժշկականութիւնը. նա ծնունդ է առել համարեա մարդու հետ միասին և նորա հետ քայլ առ քայլ տարածել է աշխարհի շորս կողմը. բայց միևնոյն ժամանակ ոչ մի գիտութիւն այնպէս դանդաղ չէ առաջ գնացել ինչպէս բժշկականութիւնը: Հազարաւոր տարիների ընթացքում նա փոփոխակի անցել է քուրմերի և կրօնի պաշտօնեաների ձեռքից փողոցային խաբեբաների ձեռքը և բոլոր ժամանակ ծածկւած միտոքականութեան և տգիտութեան անթափանցելի քողով, չէ կարողացել դուրս գալ այն ճշմարիտ և ուղիղ ճանապարհի վրայ, որով պէտք է ընթանայ ամեն մի ճիշտ գիտութիւն:

Բժշկականութիւնը իբրև գիտութիւն իսկապէս ծնունդ է առել ներկայ տասնևիններորդ դարում. և այս մի քանի տասնեակ տարիների ընթացքում, հաստատապէս կարելի է ասել որ, նա շատ աւելի յառաջադիմել և զարգացել է քան թէ նախընթաց տասնեակ հարիւրաւոր տարիների ընթացքում: Նախկին հատուկտոր էմպիրիկական միջոցների փոխանակ, որոնց նիւթն էր միմիայն հիւլանդ անհատը, այժմեան բժշկականութիւնը մշակել է արդէն մի

ամբողջ շարք գիտնական սկզբունքներ, որոնց նպատակն է պահպանել ոչ միայն անհատի այլ և ամբողջ հասարակութեան առողջութիւնը: Նա իւր ծրագրի մէջ է առել նաև այն բազմակողմանի և բարդ պայմանների ուսումնասիրութիւնը, որոնցից կախած է մարդկային սերնդի յարատևութիւնը: Այդպիսով բժշկականութիւնը առաջաջ նեղ և միակողմանի սահմանից անցել է զուտ հասարակական գիտութիւնների շարքը, որոնց մէջ այսօր նա ստացել է արդէն առաջնակարգ նշանակութիւն: Սոցիոլոգիան, իրաւագիտութիւնը և նոյն իսկ պատմական դիտութիւնները իրանց վերաբերեալ շատ խնդիրների լուծումը յաճախ ստիպւած են ենթարկել բժշկական գիտութեան վճռին:

Այն ինչ որ ասացինք բժշկականութեան դանդաղ զարգացման մասին առհասարակ՝ աւելի մեծ չափով վերաբերում է նրա այն ճիւղին, որի նիւթն է մարդու հոգեկան և ջղային կարողութիւնների ուսումնասիրութիւնը: Սրա պատճառը այն է՛ որ բժիշկները չէին հասկանում այդ ճիւղի բարձր նշանակութիւնը, այլ այն չափազանց բարդ և դժւար լուծանելի երևոյթներն էին, որոնցով արտայայտուում է ջղային և հոգեկան համակարգութիւնների (սիստեմաների) գործունէութիւնը: Գիտութիւնը երկար ժամանակ անկարող էր թափանցել այդ գործունէութեան գաղտնիքների մէջ. նորան յայտնի չէին ոչ ուղեղի նուրբ կազմակերպութիւնը և ոչ էլ նրա մէջ կատարուող երևոյթների էութիւնը, հոգեկան և ջղային կարողութիւնները համարուում էին այնպիսի վերացական երեւոյթներ, որոնցով զբաղւելը ոչ միայն աւելորդ այլ նաև անբնական էր համարուում բժշկի համար: Եւ մինչդեռ բնական գիտութիւնների զարգացման ազդեցութեան տակ բժիշկները օրինակելի ցանկութեամբ և ժրջանութեամբ ուսումնասիրում և պարզում էին մարդկային կազմածքի այլ և այլ գործարաններում կատարուող երևոյթները, միևնոյն ժամանակ նրանք համարեա ոչինչ ուշադրութիւն չէին դարձնում այն գործարանների և այն կարողութիւնների վրայ, որոնք կազմում են օրգանական կեանքի ամենաբարձր արտայայտութիւնը և որոնցով մարդ արարածը որոշուում է մնացած անբան արարածներից:

Մինչև վաթսուներկու թուականների սկիզբը հոգեբանութիւնը

մնում էր մի գուտ մետաֆիզիքական վարդապետութիւն: Այդ վարդապետութիւնը համարում էր հոգին իբրև լոկ հաւաքածու առանձին գործունէութիւնների (ֆունկցիաների) կամ կարողութիւնների, առանց կանգ առնելու այն նիւթական տարրի վրայ, որի մէջ կատարւում են այդ ֆունկցիաները. նա չէր ուսումնասիրում ուղեղը իբրև գործարան, որի մէջ ծնունդ են առնում հոգեկան երևոյթները: Մետաֆիզիկական ուսումնասիրում էր միայն ուղեղի ֆիզիոլոգիան, առանց ծանօթ լինելու նորա անատոմիայի հետ¹⁾. այդպիսով նա արհեստական կերպով բաժանւում էր այն՝ ինչ որ բնութիւնը անբաժան է ստեղծել: Բժիշկ Իւմանսի ասելով—մարդը՝ որ մի ամբողջական էակ է, արհեստական կերպով բաժանւել էր երկու մասի. մարմինը վերցրել էին բժշկականութեան դոկտորները, իսկ հոգին փիլիսոփայութեան դոկտորները, և սրանք միայն մի կէտում համաձայն էին իրար հետ, այն է որ ոչ մէկը չհամաձայնի ոտք դնել միւսի սահմանի վրայ:

Յնորհիւ այդ նեղ և ծուռ հայեացքին հոգեբանութիւնը, իբրև մետաֆիզիքական վարդապետութիւն, բոլորովին դուրս էր մնացած բնական գիտութիւնների սահմանից. և բժշկականութիւնը իւր զիտական և գործնական նպատակների համար շատ սահմանափակ կերպով կարողանում էր օգուտ քաղել նրա արդիւնքներից: Եւ գուցէ դեռ երկար ժամանակ կը շարունակէր իրերի այդ անբնական դրութիւնը, եթէ օգնութեան չհասնէր բիոլոգիան (կենսաբանութիւնը), որը մի կայող օղակ դարձաւ այդ երկու ճիւղերի մէջ. նա իւր զօրաւոր թւեքից մէկը պարզելով մէկին, իսկ միւսը

¹⁾ Անատոմիա (մարդակազմութիւն) անւանւում է այն գիտութիւնը, որի նիւթն է նկարագրել մարդկային կազմածքի շէնքը միայն, առանց ուշադրութիւն դարձնելու այդ շէնքի մէջ կատարող գործունէութիւնների վրայ: Իսկ ֆիզիոլոգիան (բնախօսութիւն) ընդհակառակը զբաղւում է միմիայն այդ գործունէութիւնների (ֆունկցիաների) ուսումնասիրութեամբ: Վերցնենք օրինակի համար թոքերը, ստամոքսը, սիրտը և այլն. անատոմիան ուսումնասիրում է այդ գործարանների միայն ձևը, կերպարանքը, տեղը, դիրքը և այլ արտաքին չատկութիւնները. իսկ ֆիզիոլոգիան ուսումնասիրում է այդ գործարանների մէջ կատարող երևոյթները—չնչաւութիւնը, մարսողութիւնը, արեան շրջանադարձութիւնը և այլն:

միւսին՝ կրկին ի մի ձուլեց այն՝ ինչ որ անբաժան է, ստեղծած:

Այդ միութիւնը կատարեց 60-ական թւականների սկզբին, շնորհիւ գլխաւորապէս Հերբէրտ Սպենսերի զօրաւոր հանձարին:

Այն ժամանակ երբոր հանձարաւոր Ղարւինը աշխատում էր ձգել ժամանակակից բիոլոգիայի հիմքը, Սպենսէրը մշակում էր իւր նշանաւոր «Հոգեբանութեան հիմունքները»:—Ապրելով և գործելով Ղարւինի հետ միաժամանակ, բաց նորանից բոլորովին անկախ կերպով, Սպենսէրը նոյնը արաւ հոգեբանութեան համար ինչ-որ Ղարւինը բնական գիտութիւնների համար. այդ սլաոճաւով Սպենսէրի վարդապետութիւնը իրաւաժբ անւանւում է հոգեբանութեան դարւինիզմ կամ հոգեբանութեան էւոլյուցիոնիզմ (բնափոխութիւն): Համեմատական հոգեբանութիւնից վերցրած մի շարք փաստերով Սպենսէրը ցոյց աւեց որ հոգեկան և ջղային գործունէութիւնը անխոզելի և անպայման կերպով կապւած են ուղեղի և ջղերի կազմակերպութեան հետ: Նա գիտնական հիմունքների վրայ դրաւ այն հարցը, որը առաջ միայն վերացական դատողութիւններով էր լուծւում թէ մետաֆիզիկների և թէ նոյն իսկ նրանց հակառակորդ մատերիալիստների (նիւթականների) շղոյաջում:

Սպենսէրի վարդապետութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ նշանաւոր մտածողների և ֆիզիոլոգների մոլքի վրայ: Նրա փիլիսոփայական աշխատութիւնների հրատարակութիւնից անմիջապէս յետոյ ծնունդ առան երկու նշանաւոր ուղղութիւններ ջղերի և ուղեղի ուսումնասիրութեան համար:

Մի կողմից չայսնի ֆիզիոլոգները, որոնց թւումն էին Ղոնդէրս, Հէլմհոլց, Վունդտ և ուրիշները, սկսեցին փորձնական կերպով ուսումնասիրել հոգեկան երևոյթները և ստեղծեցին հոգեբանութեան այն ճիւղը, որ անւանւում է հոգեչափութիւն (психометрия): Մրանք չբաւականանալով այն մեթոդով, որը ուսումնասիրում էր հոգեկան կարողութիւնները միմիայն ինքնազնութեամբ, սկսեցին ամենանորբ և ամենաճիշտ գործիքների օգնութեամբ վերլուծել այդ կարողութիւնները և որոշել ժամանակը, ոյժը և սեռողութիւնն ոչ միայն հասարակ շարժողութիւնների, այլ նաև այնպիսի զուտ հոգեկան երևոյթների ինչպէս է ըմբռնողութիւնը և գաղափարի կազմակերպութիւնը: Այդ փորձերի շնորհիւ

գիտութիւնը այժմ կարողանում է որոշել թէ օրինակի համար ինչքան ժամանակաց մէջ տեսողութիւնը փոխարկուում է ըմբռնողութեան, ըմբռնողութիւնը հասկացողութեան և հասկացողութիւնը մտածողութեան: Մի շարք հետազօտութիւններ, որոնք մէկմէկուետեւից զուրս եկան Վուսկոտի աշխատարանից (լաբորատորիայից), նոր լոյս ձգեցին այնպիսի մութ երեւոյթների վրայ, ինչպէս են օրինակ ուշադրութիւնը կամ երեւակացութիւնը. նրանք գիտնականօրէն և փորձական կերպով պարզեցին մտաւոր կարողութիւնների զարգացման էութիւնը, որոշեցին հոգեկան գործողութիւնների արագութիւնը այլ և այլ հիւանդութիւնների ժամանակ և լուծեցին մի շարք խնդիրներ, որոնք, բացի զուտ գիտնական հետաքրքրութիւնից, ունին նաև մեծ գործնական նշանակութիւն թէ կեանքի, թէ դպրոցի և թէ բժշկականութեան համար:

Միւս կողմից գիտնականները, որոնց թւումն էին Բիշա, Բրոկա, Կլոդ-Բէրնար, Կուսմաուլ, Վէրնիկ և այլն, ուշադրութիւն դարձրին ուղեղի և ջղերի կազմակերպութեան վրայ և աշխատեցին ճիշտ կերպով որոշել տեղը, դիրքը և փոխադարձ կապակցութիւնը այն աւանձին մեխանիզմների, որոնք տեղաւորւած են գլխի և մէջքի (ողնաշարի) ուղեղների մէջ: Մարդակազմութիւնը և հիւսւածաբանութիւնը (ГИСТОЛОГИЯ)¹⁾ ձեռք ձեռքի տւած քիմիային, նաև խոշորացօցի և ուրիշ նուրբ գործիքների միջոցով պարզեցին ջղերի նուրբ կազմւածքը, որոշեցին նրանց ուղղութիւնը, նրանց սկզբնաւորութիւնը և վերջաւորութիւնը, նրանց չարաբերութիւնը գլխի և մէջքի ուղեղների հետ: Այդ հետազօտութիւնների հետեանքը եղաւ հոգեկան կեդրոնների գիւտը (պսիխոմոտորային կենտրոններ), մի գիւտ՝ որը իրաւացի կերպով համարուում է գիտութեան գլխաւոր չաղթանակներից մէկը: Շնորհիւ այդ գիւտին այժմ մենք

¹⁾ Հիւսւածաբանութիւն (ГИСТОЛОГИЯ) անւանում է այն գիտութիւնը, որը ուսումնասիրում է մարմնի բաղադրիչ մասերի տարրական կազմակերպութիւնը, այսինքն այն անտեսանելի վանդակները (клеточка, cellule), որոնք միմեանց հետ հիւսւելով կազմում են միս, ոսկոր, կաշի, արիւն և այլն: Հասկանալի է, որ այդ տեսակ ուսումնասիրութիւնը կարող է կատարւել միայն խոշորացօցի օգնութեամբ, այդ պատճառով էլ հիւսւածաբանութիւնը անւանում է նաև խոշորացօցային մարդակազմութիւն (микроскопическая анатомия):

գիտենք որ ամեն մի կենսական գործողութիւն ունի իւր սեփական և միշտ անփոփոխ կեդրոնը գլխի և ուղեղի մէջ: Այդպէս օրինակ մենք գիտենք թէ ուղեղի որ մասուքն են տեղաւորւած շարժողութեան կամ զգացողութեան կեդրոնները, մեզ յայտնի են այն կէտերը, որոնցից կախւած են խօսելու կամ շնչելու ընդունակութիւնները. գիտենք այն տեղը, որի մէջ կատարոււմ են մարդկային մտքի այնպիսի բարդ կարողութիւնները, ինչպէս են մաթեմատիքական գործողութիւնները: Այդ կեդրոնների թիւը, որ այժմ հասնում է մի քանի տասնեակների, շնորհիւ նորանոր հետազօտութիւնների օրէցօր աւելի և աւելի շատանում է, և հետու չէ այն ժամանակը, երբ մեզ արդէն յայտնի կը լինին այնպիսի նորը կեդրոններ, ինչպէս են առանձին առանձին գոյների, համերի, հոտերի և նոյն իսկ առանձին առանձին հնչիւնների կեդրոնները. սրանցից մի քանիսը այժմ իսկ արդէն գտնւած և ձշղօնէն որոշւած են ¹⁾: Եւ ահա, շնորհիւ այդ ամենի, այսօրւայ օրս երբ բժիշկը հանդիպում է մի հիւանդի, որը կորցրել է մարմնի այս կամ այն մասի շարժողութեան կամ զգացողութեան ընդունակութիւնը, որը զրկւել է խօսելու կարողութիւնից, նա արդէն ճշտութեամբ կարող է որոշել այդ խանգարումների տեղը և նոյն իսկ նրանց չափը և էութիւնը: Մարդ ակամայ մի տեսակ հպարտութիւն է զգում, երբ տեսնում է գիտութեան այդ յաղթանակը բնութեան այն զաղտնիքների վրայ, որոնք հազարաւոր տարիների ընթացքում ծածկւած էին մնացել մարդու հետաքրքիր և թափանցող խելքից: Սակայն դեռ ինչքան հեռի է գիտութիւնը իւր վերջնական յաղթանակներից...

Այդպիսով Սպենսերի վարդապետութիւնը պատճառ դարձաւ հոգեչափական փորձերին և հոգեկան կեդրոնների գիւտին, որոնց հիման վրայ քիչ ժամանակից յետոյ Վունդտը բարձրացրեց Ֆիզիոլոգիական հոգեբանութեան հսկայ շինւածքը, որ արդէն ամբողջապէս մտնում է բժշկական գիտութեան լայնածաւալ շրջանակի մէջ:

(Կը շարունակւի)

¹⁾ Այդ ասպարէզում գործող գիտնականների թւում չափնի են ուսաներից պրոֆ. Սեչէնովը, վրացի իշխան պրոֆ. Թարխանովը և հայազգի պրոֆ. Ղազարոս Թումասը, որը առաջինը ճիշդ որոշեց փսխողութեան կեդրոնի տեղը երկաթնաձև ուղեղի մէջ: